05.02.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
փետրվարի 4-ի N 129 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում է արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական գործողությունների կամ ահաբեկչական գործողությունների դեպքում անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում պահանջող հիվանդությունների և վիճակների դեպքում այլ անձանց (բացառությամբ տուժածների) անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական գործողությունների կամ ահաբեկչական գործողությունների դեպքում՝ ըստ իրավիճակի, տուժածների թվի, վնասվածքների բնույթի, Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին) որոշում է ընդունում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կամ դրանց մի մասի կողմից պացիենտների պլանային, հիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումն ամբողջությամբ կամ մասնակի դադարեցնելու մասին՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքին համապատասխան և թղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում լիցենզավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին (անկախ սեփականության ձևից) (այսուհետ՝ բժշկական հաստատություն)՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինվորական հոսպիտալների:

3. Բժշկական հաստատությունը սույն կարգի 2-րդ կետով նշված դեպքերում լիազոր մարմնի որոշումը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում նախապատրաստվում է

այլ անձանց (բացառությամբ տուժածների) ընդունելության, եթե լիազոր մարմնի կողմից այլ ժամկետներ չեն սահմանվում:

4. Սույն կարգի 3-րդ կետի համաձայն՝ բժշկական հաստատությունը ճշգրտում է բուժվող պացիենտների վիճակը և յուրաքանչյուր պացիենտի դեպքում կայացնում է «ենթակա է դուրսգրման», «ենթակա է տեղափոխման այլ բժշկական հաստատություն» կամ «ենթակա է հետագա բուժումը շարունակելու» որոշումները:

5. Սույն կարգի 4-րդ կետով ընդունված որոշումների համաձայն՝ բժշկական հաստատությունն իրականացնում է պացիենտների դուրսգրում կամ տեղափոխում այլ բժշկական հաստատություն և հնարավորինս ազատում առկա ծավալված մահճակալները՝ միաժամանակ կատարելով լրացուցիչ մահճակալներ ծավալելու հաշվարկները և ճշգրտելով մահճակալների ծավալման տեղակայման վայրերը:

6. Սույն կարգի 4-րդ և 5-րդ կետերով նշված միջոցառումների արդյունքների հիման վրա բժշկական հաստատությունն արձագանքման կարողությունների և այլ անձանց (բացառությամբ տուժածների) ընդունելու պատրաստականության մասին գրավոր տեղեկատվություն է տրամադրում լիազոր մարմնին (Ձև N 1):

7. Լիազոր մարմինը բժշկական հաստատություններից ստանալով սույն կարգի 6-րդ կետով սահմանված տեղեկատվությունը՝ 48 ժամվա ընթացքում հաստատում է այլ անձանց (բացառությամբ տուժածների) ընդունող, ինչպես նաև աջակցության կարիք ունեցող բժշկական հաստատությունների ցանկերը:

8. Սույն կարգի 7-րդ կետով հաստատված ցանկերի համաձայն՝ այլ անձանց (բացառությամբ տուժածների) ընդունող բժշկական հաստատությունը սույն կարգի 2-րդ կետով նախատեսված դեպքերում այլ անձանց (բացառությամբ տուժածների) հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում տրամադրում է՝ համաձայն բնակչության անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկի, իսկ աջակցության կարիք ունեցող բժշկական հաստատությունը գործում է սույն կարգի պահանջներին համապատասխան՝ կարիքների բավարարմանը զուգընթաց:

9. Բժշկական հաստատությունը յուրաքանչյուր օր՝ օրը մեկ անգամ ազատ մահճակալների, պացիենտների շարժի և լրացուցիչ կարիքների (կադրեր, դեղեր, բժշկական նշանակության ապրանքներ, սարքեր և սարքավորումներ և այլն) վերաբերյալ թղթային կամ էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն է ներկայացնում լիազոր մարմնին:

10. Այլ անձանց (բացառությամբ տուժածների) թվաքանակի ավել լինելու պատճառով տվյալ անձանց ընդունման անհնարիության դեպքում բժշկական հաստատությունը կապ է հաստատում լիազոր մարմնի հետ՝ այդ անձանց այլ բժշկական հաստատություն (ազատ մահճակալներ ունեցող) ուղեգրման հետ կապված:

11. Բժշկական հաստատությունները լիազոր մարմնի հետ կազմակերպական և համակարգման աշխատանքներն ապահովում են իրենց ղեկավարների որոշմամբ նշանակված պատասխանատուների միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Ձև N 1

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ) ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

_____

(բժշկական հաստատության անվանումը)

NN ը/կ	Արձագանման կարողություններ	Առկա է	Կարիք կա			Պատրաստ է ընդունելության այլ անձանց (բացառությամբ տուժածների)		
		(նշել ռեսուրսի քանակը (մակերեսը)	(նշել պահանջվող ռեսուրսի անվանումը)	(նշել պահանջվող ռեսուրսի քանակը)		Պատրաստ է լիովին	Պատրաստ է մասնակի	Պատրաստ չէ
1.	Մահճակալային ֆոնդ							
2.	Կադրային ներուժ, այդ թվում՝							
1)	բժիշկ							
2)	բուժքույր							
3)	կրտսեր բուժանձնակազմ							
3.	Նյութական միջոցներ, այդ թվում՝							
1)	դեղեր և բժշկական նշանակության ապրանքներ							
2)	բժշկական սարքեր և սարքավորումներ							
3)	գույք, այդ թվում՝							
	• անշարժ՝ շենքային պայմաններ							
	• շարժական՝ շտապ օգնության մեքենա, սանիտարական մեքենա							